



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
S 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԽՈՐԵՆ ՄԻՒԹԱՐՅԱՆ - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
ԱՇՈՏ ՍԱԼԵԱԶԱՐՅԱՆ - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հիմնաբառեր. *Ֆինանսական համակարգ, ֆինանսական միջնորդություն, պահուստավորման նորմ, տոկոսադրույք, բանկեր, արտարժույթային ինտերվենցիաներ*

Հոդվածում քննարկվել և բացահայտվել են ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման հիմնական միտումները, դիտարկվել է ֆինանսական միջնորդության աճը, վերլուծվել են տնտեսությանը տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների ծավալները, ուսումնասիրվել են առևտրային բանկերի հաճախորդների քանակը և ՀՀ բանկային համակարգի մասնաճյուղերի ցանցը, քննարկվել են բանկերի պարտադիր պահուստավորման նորմատիվի փոփոխության հետևանքները, գնահատվել են բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի փոփոխության հետևանքները և ՀՀ ԿԲ արտարժույթային ինտերվենցիաները (ներխուժումները) միջբանկային շուկայում, ցուցաբերվել է բանկային նորմատիվների ցուցանիշների դասակարգման նոր մոտեցում:

Ներկա պայմաններում ՀՀ մակրոտնտեսական քաղաքականությունում տնտեսական աճի հայեցակարգից աստիճանաբար անցում է կատարվում տնտեսական զարգացման հայեցակարգին, որի հիմնական գրավականը ներքին ռեսուրսների միավորումն է: Իսկ դրա կարևոր խողովակը ֆինանսական համակարգն է, որը, չնայած բոլոր առկա հիմնախնդիրներին, վերջին տարիներին կայուն աճ և զարգացում է արձանագրում¹: ՀՀ-ում սահմանադրական վերջին փոփոխություններով ամրագրվել է, որ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրներից մեկը ֆինանսական կայունության ապահովումն է: ՀՀ ԿԲ-ն ֆինանսական կայունությունն ընկալում է որպես ֆինանսական համակարգի գործունեության անընդհատություն, որի պարագայում ակտիվների գները, տոկոսադրույքները, համապատասխան շուկայի բոլոր ցուցանիշները մեծ տատանումներ չեն կրում:

Ընդհանուր առմամբ, ՀՀ ԿԲ-ն արտաքին տնտեսական շուկերին, ներառյալ՝ ՌԴ-ից եկող ցնցումներին արձագանքել է համեմատաբար արագորեն՝ դրամավարկային և մակրոպրոդուկտային քաղաքականության գործիքակազմով, որի հետևանքով հնարավոր է դարձել ապահովել մակրոտնտեսական կայունություն²: Միաժամանակ, վերջին տարիներին ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման միտումներն ապահովել են ֆինանսական միջնորդության աճ:

¹ Հավելված N 1, ՀՀ կառավարության 2013 թ. նոյեմբերի 14-ի նիստի N 47 արձանագրային որոշում, Իրական հատվածի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման հայեցակարգ:

² Զավադյան Ա., «Վերջին մի քանի տարիների ընթացքում ֆինանսական համակարգը ցուցաբերել է դինամիկ զարգացման միտումներ», <http://www.tert.am/am/news/2016/03/21/arm/1968929>

ՀՀ ֆինանսական համակարգի ամենախոշոր մասնակիցը շարունակում է մնալ բանկային համակարգը, որին 2016 թ. բաժին է ընկել ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 89%-ը: Բնութագրական է, որ տնտեսությանը տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների ծավալները 2008 թ. մինչ օրս աճել են միջինում տարեկան մոտ 20%-ով: Արդյունքում վարկեր/ՀՆԱ ցուցանիշը 17%-ից աճել է մինչև 39%, իսկ ավանդներ/ՀՆԱ ցուցանիշը՝ 12%-ից մինչև 35%: Վարկերի բարձր աճի տեմպեր են արձանագրվել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը: Մասնավորապես՝ գյուղատնտեսական վարկերի ծավալների միջին տարեկան աճը կազմել է մոտ 20%, ինչի շնորհիվ այս ոլորտում վարկային միջնորդությունը գրեթե եռապատկվել է՝ 2015 թ. արդեն կազմելով 22%¹:

ՀՀ-ում գործող առևտրային բանկերի հաճախորդների քանակը, 2008 թ. համեմատ, ավելի քան կրկնապատկվել է, իսկ բանկային հաշիվների քանակը՝ գրեթե եռապատկվել: Բանկերի հաճախորդների քանակն այսօր 2.3 մլն է, իսկ հաշիվների քանակը՝ 3.1 մլն²: Անշուշտ, այստեղ պետք է հաշվի առնել, որ միևնույն հաճախորդը կարող է ունենալ մի քանի հաշիվներ և սպասարկվել տարբեր բանկերում:

Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների ծավալները 2008 թ. 236 մլրդ ՀՀ դրամից ավելացել են մինչև մոտ 1 տրլն 180 մլրդ ՀՀ դրամ, ինչին նպաստել են Ավանդների երաշխավորման հիմնադրամի կողմից երաշխավորվող ավանդների սահմանաչափի բարձրացումները (դրամային ավանդների դեպքում՝ մինչև 10 մլն, իսկ արտարժույթով ավանդների դեպքում՝ մինչև 5 մլն ՀՀ դրամ): Տնտեսավարող սուբյեկտների դեպքում, ստվերային տնտեսավարման նվազման և տնտեսական աճի պայմաններում, արձանագրվել է նաև անկանխիկ հաշվարկների զգալի աճ:

ՀՀ բանկային համակարգը ներկայում ունի մասնաճյուղերի բավական լայն ցանց (ավելի քան 500 մասնաճյուղ), ինչը թույլ է տալիս ապահովել համապատասխան ծառայությունների բավարար հասանելիություն: Այդ առումով, ՀՀ-ն մոտ է Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներին. օրինակ՝ Հայաստանում 100 000 չափահաս բնակչությանը բաժին ընկնող մասնաճյուղերի քանակը 23 է, Էստոնիայում՝ 12, Հունգարիայում՝ 16, Ադրբեյջանում՝ 11, Չեխիայում՝ 24 և Մակեդոնիայում՝ 25³:

Այդուհանդերձ, ֆինանսական ծառայությունների հասանելիության առկա մակարդակը դեռևս բավարար չէ, իսկ հետագա առաջընթաց ապահովելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ, օրինակ՝ նոր տեխնոլոգիաների կիրառում և սպառողների շրջանում ֆինանսական ծառայությունները պատասխանատվությամբ սպառելու մշակույթի ձևավորում, ֆինանսական ներառականություն և կրթություն:

Հարկ է նշել, որ ներգրավված արտարժույթային միջոցների համար 20%, իսկ ապա 18% պարտադիր պահուստավորման նորմատիվի սահմանումը բանկերին հնարավոր

¹ ՀՀ ԿԲ տեղեկագիր, 2016:

² ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն, 2015:

³ Ա.Ջավադյան, «Վերջին մի քանի տարիների ընթացքում ֆինանսական համակարգը ցուցաբերել է դինամիկ զարգացման միտումներ», <http://www.tert.am/am/news/2016/03/21/arm/1968929>

րություն է տվել առավել գրավիչ պայմաններ առաջարկելու դրամային խնայողությունների համար: Պարտադիր պահուստավորման գործող դրույքները բխում են գների կայունության ապահովման ԿԲ խնդրից և, այս տեսանկյունից, արտարժույթով ներգրավված միջոցների բարձր դրույքը կարող է նպաստել ֆինանսական համակարգի դոլարայնացման նվազեցմանը և խթանել երկարաժամկետում դրամային վարկավորման աճը: Ի հավելումն, այսօր բանկերը պարտադիր պահուստները ապահովում են հիմնականում ներգրավված դրամային ավանդների և ԿԲ-ի հետ ռեպո համաձայնագրերով ներգրավված միջոցների հաշվին:

Դրամով ներգրավված միջոցների պահուստավորման դրույքը 2% է, իսկ երկու տարուց ավելի ժամկետով դրամով ներգրավվածներինը՝ 0%: Դրա արդյունքում կտրուկ աճել է դրամային և արտարժույթային միջոցների գծով պարտադիր պահուստավորման դրույքների տարբերությունը, որը ԿԲ ապադոլարայնացման կարևոր գործիքներից է և նպատակաուղղված է նվազեցնելու դրամային միջոցների արդյունավետ տոկոսադրույքը՝ այդպիսով առևտրային բանկերին հնարավորություն տալով առավել գրավիչ պայմաններ առաջարկելու դրամային խնայողությունների համար:

Բացի այդ, ԿԲ-ն որոշակի չափանիշներին բավարարող, ինչպես, օրինակ՝ միջազգային հեղինակավոր ֆինանսական կառույցներից, արտասահմանյան և տեղական բորսաներում պարտատոմսերի թողարկմամբ 2 տարուց ավելի մարման ժամկետով արտարժույթով ներգրավված միջոցների համար իրականացրել է որոշակի մեղմացումներ՝ ընդհուպ առավել երկարաժամկետ միջոցների համար սահմանելով 0-ական դրույք:

Նկատենք, որ ԿԲ-ն չի արձագանքում այն ցնցումներին, որոնք վերաբերում են ամբողջական առաջարկին, քանի որ դրա արդյունքում կարող է վտանգվել ինչպես տնտեսական աճը, այնպես էլ կարող են արձանագրվել գնաճային ռիսկեր:

Ինչ վերաբերում է կառավարության եվրոբոնդերի՝ 8% եկամտաբերության պայմաններում բանկերի կողմից խելամիտ տոկոսադրույքով արտարժույթային միջոցներ ներգրավելու հնարավորությանը, ապա հարկ է նշել, որ տվյալ եվրոբոնդերը թողարկվել են 7 և 10 տարի մարման ժամկետներով, իսկ երկարաժամկետ ներգրավված միջոցների տոկոսադրույքները, ինչպես գիտենք, համեմատաբար բարձր են: Մինչդեռ պարտադիր պահուստավորման ցածր դրույքները կիրառելի են առնվազն 2-4 տարի մարման ժամկետով թողարկված պարտատոմսերի համար: Հետևաբար՝ բանկերը կարող են նույնիսկ եվրոբոնդերի 8% եկամտաբերության դրույքից ցածր տոկոսադրույքով ներգրավել միջոցներ, որոնց գծով կիրառելի կլինեն պարտադիր պահուստավորման նույն ցածր դրույքները:

Բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի՝ 5 մլրդ-ից մինչև 30 մլրդ դրամ բարձրացման որոշումը նպատակաուղղված էր երկարաժամկետում ֆինանսական համակարգի կայունության ամրապնդմանը, բանկային համակարգի մրցունակության բարձրացմանը և ֆինանսական միջնորդության խորացման խթանմանը:

Բացի այդ, բանկային համակարգում ընթանում են նաև բանկերի միացումների և միաձուլումների գործարքներ, որոնց արդյունքում չեն փակվում բանկեր, այլ իրավահաջորդ բանկերը ձեռք են բերում գործարքի մասնակից բանկերի ակտիվները և պարտա-

վորությունները, համատեղում են մրցակցային առավելություններն ու ուժեղ կողմերը (սիներգիայի էֆեկտ)՝ ապահովելով դրանց գործունեության արդյունավետության ու մրցունակության մակարդակի բարձրացում: Այս գործարքները չեն կարող ազդել ավանդատուների, վարկառուների և մյուս հաճախորդների բնականոն սպասարկման վրա:

Ինչպես հայտնի է, 2014 թվականի դեկտեմբերից սկսած, ՀՀ ԿԲ-ն արտարժութային ինտերվենցիաներն իրականացնում է ոչ թե բորսայում, այլ միջբանկային շուկայում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ տնտեսության վրա տարածաշրջանի երկրների բացասական զարգացումների ազդեցության տարբեր գնահատականների հետևանքով շուկայի մասնակիցների, ֆիզիկական և իրավաբանական անձանց մեծ մասը հայտնվել է անորոշության մեջ, և գերակշռում է այն սուբյեկտիվ կարծիքը, թե փոխարժեքը կառավարվում է ԿԲ-ի կողմից: Վերջինս իր քաղաքականության մեջ նպատակահարմար է գտել, որ նույնիսկ ինտերվենցիաների գինը պետք է որոշեն շուկայի մասնակիցները: Անշուշտ, այդ փոփոխությունը զգալիորեն նպաստել է արտարժութային շուկայի կայունացմանը¹:

ՀՀ բանկային համակարգում գործող ֆինանսատնտեսական նորմատիվային ցուցանիշների համախումբը նպատակահարմար է դասակարգել հետևյալ երեք ուղղությամբ՝ հուսալիության, հաշվենկատության² և որևիցե ուղղության մղելու շարժառիթով: Ներկայումս առավել ձևավորված են հուսալիություն ապահովող նորմատիվները, սակայն, միաժամանակ, պետք է կարևորել նաև որևիցե ուղղության մղումն ապահովող այն նորմատիվները, որոնք առավել ակնառու կընդգծեն ֆինանսական ցուցանիշների նորմավորման կարգավորիչ դերը տնտեսության կայուն զարգացման ապահովման գործընթացում: Տնտեսական աճի կարգավորման մակրոհաշվենկատության սկզբունքներից ելնելով, ինչպես նաև պետական կարգավորման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պետք է սահմանել տնտեսական անկումը կանխարգելող նորմատիվային լծակներ՝ հարկային վճարումների հետաձգումների, պետական երաշխիքների ապահովվածությամբ վարկավորումների տրամադրման ոլորտներում:

ՀՀ առևտրային բանկերում պետք է առավել կարևորել ծախսերի արդյունավետության ցուցանիշը, որը հաշվարկվում է որպես ծախսերի և գործառնական եկամուտների հարաբերություն: Բանկային համակարգում դա բավական բարձր է և վերջին տարիներին կազմում է 50.0% և ավելի: Ներկա իրավիճակում բանկերը պետք է շեշտը դնեն այդ ծախսերի կրճատման վրա և աշխատեն առավել տնտեսող ռեժիմով:

¹ Ա.Ջավադյան, «Վերջին մի քանի տարիների ընթացքում ֆինանսական համակարգը ցուցաբերել է դինամիկ զարգացման միտումներ, <http://www.tert.am/am/news/2016/03/21/arm/1968929>

² Հաշվենկատության (զգուշության) սկզբունքը ենթադրում է բավարար չափի զգուշության պահպանում, որպեսզի ակտիվները կամ եկամուտները գերգնահատված, իսկ պարտավորություններն և կորուստները (ծախսերը) թերագնահատված չլինեն՝ միաժամանակ, թույլ չտալով թաքցված պահուստների ստեղծում:

КАРЕН ГРИГОРЯН

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ РА

Ключевые слова: финансовая система, финансовое посредничество, банковская система, процентная ставка, валютные интервенции

В статье обсуждены и выявлены основные тенденции в развитии финансовой системы РА, рост финансового посредничества, проанализированы объем депозитов, кредитов, численность клиентов банков и филиальной сети банковской системы, последствия изменения обязательных резервов банков, оценены изменения размера минимального уставного капитала банков и валютные интервенции ЦБ РА на межбанковском рынке и предложен новый подход классификации банковских кредитов.

KAREN GRIGORYAN

THE MAIN TRENDS OF THE DEVELOPMENT OF RA FINANCIAL SYSTEM

Key words: financial system, financial intermediation, banking system, interest rate, foreign exchange interventions

The main trends of the development of RA financial system, particularly the growth of financial intermediation were discussed in the article, the volume of loans provided to the economy and the volume of deposits, the number of customers of commercial banks and the branches network of the Armenian banking system was analyzed, the consequences of the changes in the reserve requirements of banks, the change in the minimum capital of banks and the RA Central Bank's foreign currency interventions in the interbank market have been assessed.

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դոցենտ, ՀՊՏՀ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Հիմնաբառեր. տնտեսական աճ, աղքատություն, անհավասարություն, ներդրումներ, ՀՆԱ վերաբաշխում, դրամական տրանսֆերտներ, ինվեստիցիաներ

Աղքատությունը հարաբերական հասկացություն է և բնորոշ է բոլոր երկրներին: Ուստի պատահական չէ, որ աղքատության կրճատումը պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր հիմնախնդիրներից է: ՀՀ կառավարության 5-ամյա տնտեսական ծրագրով նախատեսվում է, որ մեր երկրում աղքատությունը պետք է կրճատվի 12%-ով և ներկայիս 30%-ից հասցվի 18%-ի: Դրա համար կարևոր նշանակություն է տրվում ներդրումների խթանմանը և, դրա շնորհիվ, տնտեսական աճի՝ տարեկան 5%-անոց տեմպերի ապահովմանը: